

403

Duluth Aug 17-


Minneapolis Duluth



Rohrbach  
1911

329

ԱՍՏՐԻ ԱԿՐՈՎԻ



# ԵՈՒԱԵՐ ՅՈԿԱՅ

Թարգ. Կար. Միքանեան

Մի կողմէկ.

825  
Շհ-13

№ 2

2.004

Տփելի

Տպարան ՀՀԵՐՄԻՍ. Մուխտանեան վրոց. № 13.  
1911

5986

824  
ՌՀ-59  
աշ

ՕՍԿԵՐ ՈՒՅՑԵԴ



# ԵՍԱՄԵՐ ՅՈԿԱՅ

Թարգ. կար. Միքանեան

Վ Հ Կ  
Գ

Միքանեան



Տիկիս  
Տպարան «Հերմէս» Մուխրանեան փող. № 13.  
1911

ԳՐԱՄ 1960

# ՅԱԻԿԻ ՌԵՍՈՒՅԱ



## ԵԱԱԷՐ ՀԱԿԱ



Ամեն օր դասերից յետոյ  
երեխաները գալիս էին Հսկայի պար-  
տէզում խաղալու։  
Ընդարձակ էր այն պարտէզը  
ու չքնաղ։ Թանձր, քնքռուշ խոս  
էր բանում այնաեղ, իսկ կանա-  
չի մէջ վթթող ծաղիկները նմանում էին վառ  
ու փալփլուն աստղիկների։ Տասներկու հատ  
գեղձի ծառ կար տնկած այն պարտէզի թաւշա-  
նման մարգերում, և գարունքին այդ ծառերը  
ծածկում էին վարդագոյն ու ճերմակ նույր  
ծաղիկներով, իսկ աշնանը կռանում առատ պը-

տուղների ծանրութեան տակ։ Ու թռչուններն  
եկել բուն էին հիւսել նրանց ճիւղերին. այնքան  
թռվիչ, այնքան սքանչելի էին երգում այդ թըռ-  
չունները որ երեխաները յաճախ խաղը թողած  
ականջ էին դնում նրանց գեղգեղանքին։

— Ի՞նչքան լաւ է այստեղ, — հիացմունքով  
ասում էին մանուկները։

\* \* \*

Բայց մի օր Հսկան տուն վերադարձաւ։  
Եօթը տարի առաջ նա հիւր էր գնացել իր բա-  
րեկամ մարդակեր Հրէշի մօտ. գնացել էր հետը  
զրոյց անելու, և Եօթը տարւայ ընթացքում ար-  
դէն հատել էր նրա խօսակցութեան նիւթը,  
որովհետև խօսելու շնորհք չունէր նա, ու վճռել  
էր իր դղեակը վերադառնալ։  
Տեղ համնելուն պէս նրա աշքով ընկան պար-  
տէզում խաղացող երեխաները։

— Ի՞նչ էր շինում այստեղ, — ահեղ գոռաց  
նա, — ու երեխաները սարսափահար փախան պար-  
տէզից։

— Ես եմ այս պարտէզի տէրը ու իմ սե-  
փականութիւնն է այն, — ասաւ Հսկան։ — Բոլորը,  
բոլորը պէտքէ հասկանան, որ միմիայն, ես կարող  
եմ այստեղ խաղալ։

Եւ նա բարձրաբերձ պարխապ քաշեց պար-  
տէզի շուրջը ու վրան մակագրեց։

Ոչ ո՛վ իրաւունք չունի այսեղ մտնելու

Այնպէս սաստիկ եսասէր էր նա։  
Ու այն օրից խեղճ երեխաները էլ խաղալու-  
տեղ չունէին։ Ճիշտ է, մի քանի անգամ փոր-

ձեցին փողոցում խաղալ, բայց փոշին խեղդում  
էր նրանց, իսկ սուր-սուր խիճերը սասաիկ խան-  
գարում էին: Դասերը պատրաստելուց յետոյ երե-  
խաները յաճախ պտտում էին բարձր պարիսպի  
մօտերքը և սքանչելի պարտէզը մտաբերելով  
տիսուր-տրատում ասում էին իրար.

— Ա՛խ, ինչ լաւ էր այստեղ:

\*\*\*

Գարունը բացւեց, ողջ երկիրը ծածկւեց գոյն-  
զգոյն ծաղիկներով, ու լսւեց թռչնակների  
գւարթ ճռւղիւնը: Բայց չար չսկայի պարտէ-  
զում դեռ Զիւն-Զմեռն էր շարունակում:

Երեխաներին չտեսնելով թռչունները էլ չէ-  
ին երգում այն պարտէզում, իսկ ծառերը չէին  
ուզում կանաչել: Մի անգամ միայն մի սիրուն ծա-  
ղիկ պատրաստւում էր իր չքնաղ գլխիկը դուրս  
հանել կանաչի տակից, բայց հէնց որ կարդաց

պարիսպի դաժան գրութիւնը, ցաւեց երեխանե-  
րի համար, նորից բաշւեց մայր հողի ծոցը ու  
քուն եղաւ: Միայն Զիւնն ու Սառնամանիքն էին  
հաւան չսկայի արարքին:

— Գարունը էլ ոտք չի դնում այս պարտէ-  
զը, — ասում էին նրանք ուրախացած, — այնպէս  
որ ամբողջ տարին մենք ենք իշխելու այստեղ:

Զիւնը իր մեծ սպիտակ սաւանը զցեց կա-  
նաչի վրայ, իսկ Սառնամանիքը արծաթափայլ  
եղեամով զարդարեց բոլոր ծառերը: Ապա Զիւնն  
ու Սառնամանիքը ձայն տւին չիւսիսային Քա-  
մուն, նա առանց դանդաղելու տեղ հասաւ: Մուշ-  
տակի մէջ պինդ փաթաթւած, նա օրն ի բուն  
ոռնում էր պարտէզում և տեղահան էր անում  
ծնխնելոյզները:

— Այս ինչ հրաշալի տեղ է եղել, — ասում  
էր Քամին, — ինչու Կարկտին էլ չկանչենք ո՞ր:

Զայն տւին, նա էլ եկաւ: Օրական երեք ժամ  
Կարկուտը սկսում էր թռչկոտալ գլեակի կտու-

բին, մինչեւ որ ջարդեց բոլոր կղմինտրները, ապա  
իջաւ պարտէզը ու չտեսնւած արագութեամբ  
սկսեց ոստոստել այնտեղ: Նա մոխրագոյն զգեստ  
ունէր հագին, իսկ շունչը սառուցի պէս էր:

Եսասէր Հսկան նստում էր պատուհանի մօտ,  
նայում էր սառած, սպիտակած պարտէզին ու  
միտք էր անում.

—Ինչու այսպէս ուշ է բացւում Գարունը:  
Զէ, ինձ թւում է եղանակը շուտով կփոխւի:

Բայց նչ Գարունն էր բացւում Հսկայի  
պարտէզում, ոչ էլ Ամառը գալիս: Աշունը ոսկե-  
վառ պտուղներ տւաւ միւս բոլոր այգիներին,  
բայց չուզեց մօտենալ Հսկայի պարտէզին, ու  
դեռ Զիւն-Զմեռն էր իշխում այնտեղ:

—Հսկան շատ է եսասէր, —ասում էր Աշու-  
նը:

Այդ էր պատճառը որ Զմեռը չէր բաշւում  
նրա պարտէզից և Հիւսիսային Քամին, Կարկուտը,

Սառնամանիքն ու Զիւնը պար էին գալիս ծառե-  
րի միջեւ:

\*\*\*

Մի առաւօտ Հսկան զարթնելով չընաղ երա-  
ժշտութիւն լսեց յանկարծ. նա կարծեց, թէ  
թագաւորական երաժիշտներն են անցնում փողո-  
ցով. մինչդեռ իսկապէս մի կանեփածտի ձայնն  
էր, որ հնչում էր հէնց Հսկայի պատուհանի տակ:  
իսկ Հսկայի ականջին կանեփածտի ձայնը հնչում  
էր աշխարհիս ամենաչընաղ երաժեշտութեան  
պէս, և զրա պատճառն այն էր, որ վաղուց էր  
ինչ թռչունները չէին երգել նրա պարտէզում:  
Այնուհետև Կարկուտը դադարեց կտուրը թակե-  
լուց, Քամին կտրեց ոռնոցը, ու ննջարանը լցւեց  
ծաղիկների հիասքանչ բուրմունքով:

—Վերջապէս գարունը բացւել է, —բացա-  
կանչեց Հսկան, վեր թռաւ տեղից ու դուրս  
նայեց բաց լուսամուտից:

Եւ ի՞նչ տեսաւ:

Սքանչելի տեսարան բացւեց նրա աչքի առջև: Երեխաները մտել էին պարիսպի մի փոքրիկ ծակից և բարձրացել նստել էին ծառերի վրայ: Իւրաքանչիւր ծառին մի մանուկ կար նստած: Ու ծառերը այնպէս ուրախ էին երեխաների գալուն, որ ծաղկեցին և սկսեցին ճիւղերը քնքշօրէն օրօրել նրանց գլխին: Թուչունները ուրախութիւնից զւարթածայն ծլւլում էին, իսկ ծաղիկները ողջագուրանքով ժպտում էին կանաչի միջից: Հմայիչ տեսարան էր: Միմիայն պարտէզի ամենահեռաւոր անկիւնում դեռ ևս շարունակւում էր դաժան Զմեռը: Այնտեղ մի փոքրիկ տղայ կար կանգնած և այնպէս փոքր էր նա, որ չէր հասնում ծառի ճիւղերին. կանգնած էր ծառի տակին և աղի արցունք թափելով նայում էր իր շուրջը: Խեղճ ծառը դեռ ևս ծածկւած էր ճիւն ու եղամով, իսկ կատաղի քամին ոռնալով ճօճում էր նրան:

—Բարձրացիր, սիրունիկս, —ասում էր ծառը և ճնում էր ճիւղերը խոնարհել, բայց տղան շատ էր փոքր, չէր հասնում:

Ու յանկարծ կակղեց Հսկայի սիրտը:

—Ի՞նչ եսամէր եմ եղել ես, —ասաւ Հսկան, — այժմ հասկացայ թէ ինչու չէր բացւում Գարունը: Կնսուցնեմ խեղճ մանուկին ծառի կատարին, կոչնչացնեմ պարիսպը և թոյլ կտամ, որ մանուկները գան խաղան իմ պարտէզում:

Ու նա զղջաց իր առաջւայ արարքի համար:

Ապա իջաւ սանդուղքով, կամացուկ բացեց դուռը ու մտաւ պարտէզ: Երեխաները սարսափահար փախան նրա երեսից ու նորից Զիւն-Զմեռը տիրեց այն պարտէզում:

Միմիայն փոքրիկ տղան չկարողացաւ փախչել. նա չնկատեց Հսկային, որովհետև աչքերը լի էին արցունքներով: Հսկան կամացուկ մօտեցաւ, գուրգուրելով բարձրացրեց նրան, նստեցը ծառի վրայ: Եւ ծառն անմիջապէս զուգւեց

ծաղիկներով, ու թռչունները ծլւլալով թռան նըստեցին այն ծառի վրայ: Մանուկը տարածեց ձեռքերը, փարւեց Հսկայի վզին ու համբուրեց նրան:

Միւս երեխանները տեսնելով որ Հսկայի բարկութիւնն անցել է, վերադարձան պարտէզ, ու երեխանների հետ միասին Գարունն էլ մտաւ Հսկայի պարտէզը:

— Միրուն երեխէք, — ասաւ Հսկան մանուկներին, — այսօրւանից ձեզ է պատկանում այս պարտէզը:

Ասաւ, վեր առաւ մեծ քլունգը ու գետնին հաւասարեցրեց բարձրաբերձ պարիսպը: Եւ այն օրը շուկայ գնացողները տեսան, որ Հսկան խաղում էր մանուկների հետ իր չնաշխարհիկ պարտէզում:

Երեխանները ամբողջ օրը խաղում էին, իսկ արևի մայր մտնելու ժամանակ եկան որ «միաս բարով» ասեն Հսկային:

— Հապա նրտեղ է ձեր փոքրիկ ընկերը, — հարցրեց նա մանուկներին, — ի՞նչ եղաւ այն տղան, որին ես նստեցրի ծառի վրայ: Հսկան ամենքից աւելի այն տղային էր սիրել, որովհետև նա համբուրել էր իրեն:

— Զգիտենք, — պատասխանեցին մանուկները, — գնացել է արդէն:

— Ասացէք նրան, որ էլ չվախենայ ու վազը անպատճառ գայ այստեղ խաղալու:

— Բայց մենք չգիտենք թէ որտեղ է ապրում նա, — պատասխանեցին մանուկները, — այսօր առաջին անգամ տեսանք նրան:

Ու վշտով համակւեց Հսկայի սիրտը:

\* \*

Այնուհետև ամեն օր կասերից յետոյ երեխանները գալիս խաղում էին Հսկայի հետ: Էլրեւսում միայն այն փոքրիկ տղան, որին սիրել

էր նա։ Հսկան բոլոր մանուկների հետ սիրով էր,  
բայց այն փոքրիկ տղային միշտ մի առանձին  
կարօտով էր յիշում։

—Ա՛ս ինչպէս ուզում եմ նրան տեսնել, —  
ասում էր նա։

\*\*\*

Անցան տարիներ. Հսկան ծերացաւ, ուժից  
ընկաւ։ Այժմ նա դժւարանում էր մանուկների  
հետ խաղալ. նստում էր իր մեծ բազկաթոռի  
մէջ և հրճանքով նայում էր խաղացող երեխա-  
ներին ու ծաղկափթիթ պարտէզին։

—Պարտէզս լի է գեղեցիկ ծաղիկներով, —  
ասում էր նա, —բայց մանուկները շատ աւե-  
լի գեղեցիկ են քան ամենաչքնաղ ծաղիկները։

Զմռան մի օր Հսկան հագնւելու ժամանակ  
նայեց պատուհանից։

Զմեռը այլևս այնպէս ատելի չէր թւում

նրան։ Նա այժմ գիտէր, որ տարւայ այդ եղա-  
նակին Գարունը ննջում էր, իսկ ծաղիկները  
մուշմուշ հանգիստ էին առնում։

Յանկած նրա աչքերը լայն բացւեցին զար-  
մանքից։ Այգու ամենահեռաւոր ծայրում նա մի  
փոքրիկ ծառ նկատեց քնիքուշ ձերմակ ծաղիկնե-  
րով ծածկւած, ճիւղերը ոսկէվառ էին, պառւղնե-  
րը արծաթափայլ, իսկ ծառի տակը կանգնած էր  
այն փոքրիկ տղան, որին այնպէս սիրել էր  
Հսկան։

Ու Հսկան ցնծաց ուրախութիւնից, վազեց  
պարտէզը, մօտեցաւ մանուկին ու ճշաց սարսա-  
փահար։

—Ո՞վ յանդգնեց քեզ վիրաւորել։

Տղայի ձեռքերը երկու տեղից խոցւած էին  
մեխերով, նոյնպէս և փոքրիկ ոտիկները։

—Ո՞ր յանդուգն հասցրեց քեզ այդ վէր-  
քերը, —աղաղակում էր Հսկան, —ասա ինձ, կառ-  
նեմ մեծ թուրս ու կտոր-կտոր կանեմ նրան։

— Ո՞չ, հարկաւոր չէ, —պատասխանեց մանուկը, —Սիրոյ վէրքերն են սրանք:

— Ո՞վ ես դու, —հարցրեց Հսկան, —ու յանկարծ չտեսնւած ակնածութեամբ ծունը խոնարհեց այն տղայի առջև:

Ու մանուկը ժպտադէմ ասաւ Հսկային.

— Մի ժամանակ դու ինձ թոյլ տւիր քո պարտէզում խաղամ, իսկ այսօր դու կգաս իմ պարտէզը, որ Դրախտ է կոչւում:

Ու այն օրը, երբ մանուկներն եկան խաղալու, տեսան, որ Հսկան մեռել էր ճերմակ ծաղիկներով զարդարւած ծառի տակ:



403

00004512

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004512

